

ԹԻԻ 19 20

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ 1913-14 ՇՐՋԱՆԻ
ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՆԵՆ ԵՏՔԸ

ՆԻՍՏ ԺԹ.

15 Նոյեմբեր 1913



Տպագրութիւն Տ. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ, Պապր-Ալի ձառսէսի, Թիւ. 49

1914

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

1. Տ. Եղիշե Արքեպս. Դուրեան
2. Տ. Վահրամ Սանկունի
3. Տ. Զարմայր քհնյ. Կէզիւրեան
- 4.

(Բ. Վիճակ)

5. Տ. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան
6. Տ. Գրիգորիս Ծ. Վ. Պալազեան
7. Տ. Երուանդ Ծ. Վ. Բերտաճեան
8. Տ. Սմբատ Ծ. Վ. Գազազեան

(Գ. Վիճակ)

9. Տ. Շմայեակ Արքեպս. Դիմաքսեան
10. Տ. Մաղաքիա Եպիսկ. Տէրունեան
11. Անանիա Վ. Շաղարապետեան
12. Տ. Միքայէլ քհնյ. Աշենեան

(Դ. Վիճակ)

13. Տ. Արիստակէս Ա. Բնյ. Զիզմէնեան
14. Տ. Խորէն » Զարուհիւնեան
15. Տ. Յուսիկ » Բաջունի
16. Տ. Տաճատ » Փաշայեան

(Ե. Վիճակ)

17. Տ. Եղնիկ Ծ. Վ. Պապեան
18. Տ. Շմայեակ Բաճ. Էքսէրեան
19. Տ. Բարձր » Թազմէեան
20. Տ. Արէլ » Երէցեան

ԱՇԽԱՏԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

Էյուպ Ս. Եղիա

21. Օննիկ էֆ. Մինասեան

Խասգիւղ

22. Պետրոս էֆէնտի Շալանեան
23. Պետրոս » Խօրասանեան
- 24.

Մագրիգիւղ

25. Երուանդ էֆէնտի Պէյագեան
26. Թագուր » Արեւեան
27. Տօքթ. » Մալխասեան
28. Յակոբ » Պոյանեան
29. Յովհաննէս » Խազուկեան
30. Սարգիս » Պէհրէկեան
- 31.

Պէյլիքտէրէ

32. Արշակ էֆէնտի Ալալայանեան
33. Յովսէփ » Գազազեան

Սան-Սթէֆանո

34. Գէորգ էֆ. Մանեան

Սրբապետ

5. Խսիկ էֆէնտի Սրվանեան
336. Տ. Բ. Ստեփան էֆէնտի Թէրզեան

(Բ. Վիճակ)

Բերա-Գասը-Փաշա

37. Աստուածատուր էֆէնտի Բաշատրեան
38. Արամ » Շալանեան
39. Արմենակ » Բալսեղեան
40. Գէորգ » Թորգման
41. Գիգոր » Շահլաբեան
42. Յովհաննէս » Չէօկիւեան
43. Սարգիս » Մինասեան
44. Տր. Վ. » Թորգոմեան
45. Գտեփան » Գաբեան

Գարթալ-Գնալը

- 46.

Գուրուբէշմէ

- 47.

Պէշիկմաշ

48. Տրդատ Պէյ Տատեան

Ֆէրիգիւղ

49. Եղուարդ էֆէնտի Գարակէօբեան
50. Շրանտ » Ասատուր
51. Մարկոս » Նաթանեան
52. Յակոբ » Պահրի

(Գ. Վիճակ)

Գատրգիւղ

53. Անտոն էֆէնտի Թալազ
54. Աղաթի » Ալասեան
55. Եղուարդ » Շիրինեան
56. Ներսէս » Օհանեան
57. Մկրտիչ » Արզարեան
58. Պեննէ » Թորոսեան
59. Սարգիս » Էսմէրեան

Եէնի-գարու

60. Պենտոն էֆէնտի Տէյրմէնեան
61. Վահան » Փափազեան

Պալաթ

62. Տօքթ. Կարապետ էֆէնտի Եաղուպեան
63. Զարուհիւն էֆ. Մոստիչեան
64. Սարգիս » Սրենց
65. Շրանտ » Անդրեանեան

Սկիւտար Եէնի-մահալլէ

66. Թորգոմ էֆէնտի Պոյանեան
67. Շմայեակ » Խոսրովեան
68. Վահան » Սուրենեան

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1913 1914 ՆԱՏԱՇՐՁԱՆԻ

ՆԻՍՏ ԺԹ.

15 ՆՈՅԵՄԲԵՐ 1913

ՆԱԽԱԳԱՀ. — ՄՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՅՐ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՏՐ. ՏԱՂԱԿԱՐԱՆ ԷՖԵՆՏԻ

ՕՐԱԿԱՐԳ

Քննութիւն նախագծի կանոնագրութեան Ա. Յակոբեանց վանուց երուսաղէմի (Շարունակութիւն վիճաբանութեան)

ԲԱՑՈՒՄ ԺՈՂՈՎՈՅ

Նիստը տեղի ունեցաւ Ղալաթիոյ Սոր-հրդարանը եւ ժամը 3 30ին առեանր բացուեցաւ ի ներկայութեան 60 երեսփոխաններու որոց թիւը հասաւ յետոյ 73իւ

ՎԱԽԵՐԱՑՈՒՄ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԱՏԵՆԱՊԵՏ էֆ. — Առեանր բացուած է Պալաթու ազգային երեսփոխաններու ընտրութեան մասին վարչութեան մէկ գիւրը կայ, զոր պիտի կարդանք:

(Առեանաղպիր էֆ. կարդաց հետեւեալ տեքստը):

Վախճալուք Առեանապետ էֆէնտի

Ազգ. Պատկ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ

Մայրաքաղաքիս Պալաթի թաղէն հրա-ժարեալ երկու երեսփոխաններու տեղ ըստ հրահանգի Պատրիարքարանիս նոր ընտրութիւն կատարուած եւ Նոյեմբեր 3 թուականաւ տեղեկագրով ներկայացուած է արդիւնքը, յորմէ կը տեսնուի թէ Ազն. Սարգիս Սրենց եւ Հրանդ Անդրէասեան էֆէնտիները ազգային երեսփոխան ընտրուած են քուէից բացարձակ առաւելութեամբ:

Ազգային կեդր. վարչութեան Գաղա-
քական ժողովը՝ Սահմանադրութեան 81րդ
յօդուածին համաձայն ստուգելով նորըն-
տիր երեսփոխաններու ընտրելութեան
պայմանները, ըստ ամենայնի համաձայն
գտաւ Սահմանադրութեան տրամադրու-
թեանց: Հետեւաբար, ընդ գրոյս Պատկ.
Ժողովիդ կը մատուցանէ ընտրական տե-
ղեկագիրը:

Մնամք յարգանք

Ի դիմաց Գաղաքական ժողովոյ
Վ. Ատենադպիրի Ատենապետ
Տր. Կ. Յ. Փաւայեան Ս. Գաւառեան

(Ատենապետ էֆ. քուէի գնելով կատար-
ուած ընտրութիւնը ազգային երեսփոխան
հոչակեց Հրանդ էֆ. Անդրէասեանն ու
Սարգիս էֆ. Սրենցը):

ԱՏԵՆ. Էֆ. — Բալուի երեսփոխա-
նական ընտրութեան տեղեկագիրն ալ ե-
կած է վարչութեան:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ
գիրը.)

Ազնուաշուք Ատենապետ էֆէնտի
Ազգ. երեսփ. Ընդհանուր ժողովոյ

Բալուի Գաւառ. Ընդհ. ժողովին կողմէ
երկրորդ վիճակաւ դադարեալ երեսփոխա-
նին տեղ ըստ հրահանգի Պատրիարքարա-
նիս նոր ընտրութիւն կատարուած եւ
Հոկտ. 14 թուականաւ տեղեկագրով մը
ներկայացուած էր արդիւնքը, յորմէ կը
տեսնուի թէ Պատրիարքարանի գործա-
կատար Գամէր էֆ. Շիրինեան ազգային
երեսփոխան ընտրուած է՝ միաձայնու-
թեամբ:

Ազգային կեդր. վարչութեան Գաղա-
քական ժողովը Սահմանադրութեան 81րդ
յօդուածին համաձայն ստուգելով նորըն-
տիր երեսփոխանին ընտրելութեան պայման-
ները, ըստ ամենայնի համաձայն գտաւ
Սահմանադրութեան տրամադրութեանց:
Միայն թէ ժողովս նկատելով որ վճար-
եալ պաշտօնեայ մը միեւնոյն ժամանակ
երեսփոխան չի կրնար ընտրուիլ, եւ նկա-
տելով որ թէեւ մեր Սահմանադրութեան
մէջ այս մասին մասնաւոր տրամադրու-

թիւն մը չկայ, բայց այս սկզբունքը ըն-
դունուած է բոլոր սահմանադրական եր-
կիրներու կողմէ, եւ թէ ասոր հակառակը
միեւնոյն անձին թէ՛ համարաւու եւ թէ՛
համարատու ըլլալու հետեւութիւնը կ'ու-
նենայ, որոշեց թէ պաշտօնէութիւն եւ
երեսփոխանութիւն անհաշտելի են, բայց
միւս կողմէ նկատելով որ երեսփ. ժողովոյ
մէջ եկեղեցական հայրերէն երեսփոխան-
ներ կան, որ միեւնոյն ժամանակ Պատ-
րիարքարանի թոշակաւոր պաշտօնեայ են,
Գաղաքական ժողովը կը յանձնէ խնդիրը
Պատկ. ժողովիդ գնահատման, միանգամ
ընդ միշտ լուծուելու համար սկզբունքի
այս հարցը:

Ընդ գրոյս Պատկ. ժողովիդ կը մա-
տուցանենք ընտրական տեղեկագիրը:

Մնամք յարգանք

Ի դիմաց Գաղաքական ժողովոյ
Վ. Ատենադպիրի Ատենապետ
Գ. Տ. Կուրապետեան Ս. Գաւառեան

ԵԴ. ՇԻՐԻՆԵԱՆ Էֆ. — Այս վերջին
տողերը ճիշդ են: Ամսականաւոր պաշ-
տօնեայ մը չի կրնար ժողովներու ան-
գամ ըլլալ: Մէկն ալ Փոխանորդ հայր-
սուրբը, որ երեսփոխան է, Կրօնական Ժո-
ղովին անդամ է, եւ միեւնոյն ատեն վը-
ճարեալ պաշտօնեայ: Ես կ'առաջարկեմ որ
Պատրիարքական Փոխանորդին երեսփոխա-
նութիւնը, ինչպէս եւ Կրօն. ժողովին ան-
գամակցութիւնը շնջուին:

ՍՄԲԱՏ ԲԻԻՐԱՏ Էֆ. — Այդ միեւնոյն
գիտողութիւնը պիտի կրնայինք ուրիշ ե-
րեսփոխաններու համար ալ ընել: Օրինակի
համար, Կրօնական ժողովի քարտուղար
երկու քահանաները երեսփոխան ալ են:
Վահան էֆ. Թէքէեան Հիւանդանոցի Հո-
գաբարձութեան քարտուղար է եւ սա-
կայն երեսփոխանութիւնը կը շարունակէ
ընել մինչեւ այսօր: Արդ, քանի որ այդ ա-
ռարկութիւնը չենք ընդհանրացուցած,
ապա ուրեմն պատճառ մը չկայ որ Գա-
մէր էֆ. ընտրութիւնն ալ մերժենք:

Հ. Էֆ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ. — Ես տարակար-
ծիք եմ վարչութեան առարկութեան: Եթէ,

ինչպէս ըսաւ Բիւրատ Էֆ., պայման դրուէր
որ վարչութեան, Տեսուչ Խորհուրդներու
եւ Հոգաբարձութեանց անդամները երեսփո-
խան չկարենան ըլլալ, ամէնքս ալ կը հաւա-
նէինք, որովհետեւ թէ՛ համարատու եւ
թէ՛ համարաւու չի կրնար ըլլալ անձ մը:
Այս սկզբունքին համաձայն, ազգային ու-
սուցիչներն ալ երեսփոխան պիտի չկարե-
նան ըլլալ: Բայց մինչեւ հիմայ ամսակա-
նաւոր պաշտօնեաներ երեսփոխանութիւն
ըրած են, եւ Յակոբ Պարոնեան Ազգային
Պատրիարքարանի պաշտօնեայ ըլլալով
հանգերձ երեսփոխանութիւն ըրած է:

Տ. ԶԱՐԲԱՅՐ ՔԶԵՅ. — Խօսակցական
էֆ. ի այն առարկութիւնը թէ Ազգ. Ժո-
ղովը վարչութեան համար իր մէջէն ան-
գամներ կ'ընտրէ եւ ճիշտ կը գտնեմ եւ
համակարծիք եմ որ դուրսէն ընտրուին:

Տ. Ե. ՎՐԴ. ՊԱՊԱՅԵԱՆ. — Այդ մասին
Սահմանադրութեան մէջ որոշ տրամադ-
րութիւն չգտնուելով, կ'առաջարկեմ որ
յաջորդին վերապահենք ասոնք եւ մինչեւ
հիմայ գործադրուած դրութեան կիրառու-
թեան հետեւինք:

(Ատենապետ էֆ. քուէի գնելով այս
ընտրութիւնը, 2ի գէմ 25 ձայնով, ըն-
դունուեցաւ եւ Գամէր էֆ. Շիրինեանը
հոչակուեցաւ երեսփոխան):

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՏԵՂԱՊԱՀԻՆ

ԱՏԵՆ. Էֆ. — Երուսաղէմի Պատր. Տե-
ղապահ Տ. Դանիէլ Արքեպսկ. հրաժարա-
կան մը ղրկած ըլլալով պիտի կարդացուի:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ
գիրը.)

Բարձրաշնորհ
Տ. Գաբրիէլ Ս. եպսկ. Ճէվահիրճեան
Բարեխնամ Պատր. Տեղապահ
եւ Նախագահ Ազգ. Պատկ. երեսփ. ժողովոյ

Մօտ չորսուկէս տարի է Պատկ. Ազգ.
Ժողովէն Երուսաղէմի Պատր. Տեղապահ
ընտրուիլ, եւ երեք տարիէն աւելի Տ.
Յարութիւն Ս. Պատրիարքի վախճանումը:

Թէ ինչ դժուրակ պայմաններու մէջ
կարողացայ պաշտօնիս ձեռնարկել եւ թէ
պաշտօնավարութեանս շրջանին ամբողջ
Ազգին վիշտ ու զայրոյթ պատճառող ո՞ր-
պիտի տղեղ ու անակնունդի դէպքեր պա-
տահեցան՝ ամէնուն ծանօթ ըլլալով հարկ
չի կայ զայնս հոս կրկին պարզելու: միայն
ներկայիս կուգամ յայտնել որ այլեւս
անօգուտ եւ անհնարին է շարունակել
Տեղապահութիւնը, թէ՛ Ս. Աթոռոյ շա-
հուգ, թէ՛ անձիս արժանապատուութեան
եւ թէ առողջական վիճակիս երբեակ տե-
սակէտով: ուստի Ձեր Բարձր Սրբազնու-
թեան միջոցաւ Ազգ. Պատկ. երեսփ. Ժո-
ղովոյ կը մատուցանեմ ներկայս իրեւ
վերջնական հրաժարագիր, խնդրելով անոր
անմիջական ընդունելութիւնը, եւ յայտ-
նելով միանգամայն որ ի մօտոյ տեղս
ժամանելիք Ազգը ներկայացնող Անձին
կամ Մարմնոյն պաշտօնավարութեանս
բարոյական ու նիւթական համարատու-
թիւնն ընելով ազատ պիտի լինիմ ասկից
մեկնելու:

Տեղն է յայտնել նաեւ որ տարւոյս
Ապրիլ 22ի Միաբանական Ընդհանուր
Ժողովին մէջ յանձին ազգային պատուի-
րակի Ազգին եղած ծանր նախատինքին
վրայ որոշած էի թէեւ իսկոյն հրաժարա-
կանս մատուցանել Պատկ. երեսփ. Ժողո-
վոյն, սակայն երբ Միաբանութիւնը կան-
խելով հարկադրեց զիս հրաժարիլ ու հոս
գալ, այս տեղ ստացայ Ազգ. կեդր. վար-
չութեան ղեկընդունող որովք կը յանձնա-
րարէր ինձ ցնոր տնօրէնութիւն սպասել
հոս Տեղապահական հանգամանքով. ահա՛
այդ իսկ պատճառաւ ներկայս այսքան
յապաղումի ենթարկուեցաւ:

Յիսուսաւանդ ողջունիլ եւ Ամենայն
յարգանք՝ Մնամ խորին աղօթակից
Հրժ. Պատր. Տեղապահ
Դանիէլ Արք. Յակոբեան

Յ. Էֆ. ՇԱՀՐԻԿԵԱՆ. — Եթէ ընդուն-
ուի այս հրաժարականը, վաւերացուցած
պիտի ըլլանք վաղեմի մէջ երեւան եկած
ըմբոստութիւնը: Հետեւաբար պէտք է որ
մերժենք զայն: Բանի որ մօտ ատենէն

մարմիններ պիտի երթան Երուսաղէմ եւ Պատրիարքի ընտրութիւն ալ պիտի կատարուի, հարկ չկայ այդ հրաժարականը ընդունելով, նոր տեղապահ մը ընտրելու վարչութիւնը պէտք է որ յանձնարարէ, որպէս զի Դանիէլ արքեպիսկոպոս չաբունակէ իր պաշտօնը մինչեւ մեր ներկայացուցչին ժամանումը:

ԱՏԵՆ. ԷՖ.— Պատուիրակութեան մասին ո եւ է որոշում չկայ տակաւին.

Յ.ՇԱՀԻԿԵԱՆ ԷՖ.— Կը խորհուի պէտք եղածը:

Տ. Ե. ՎՐԴ. ՊԱՊԱՅԵԱՆ.— Վերջին ցաւալի պատահարէն առաջ որոշեցինք պահել Տ. Դանիէլ արքեպ. իր պաշտօնին վրայ, գործը միեւնոյն վիճակին մէջ է ու ո եւ է փոփոխութեան ենթարկուած չէ, հետեւաբար նախ վանքին վիճակին դարման տանինք.

ԱՏԵՆ. ԷՖ.— Ուրեմն ի՞նչ կ'առաջարկէք:

Տ. Ե.ՋԻԿՎՐԴ. ՊԱՊԱՅԵԱՆ.— Դարձեալ մերժել տեղապահին հրաժարականը:

(Ատենադպիր էֆ. քուէի զնելով միաձայնութեամբ մերժուեցաւ Տ. Դանիէլ Արքեպիսկոպոսի հրաժարականը)

ՀՐԱՍԻՄԱՆ ԵՐԵՄՈՒՅԱՆՈՒԹԵՆԷ

ԱՏԵՆ. ԷՖ.— Ազգային երեսփոխան Երուանդ էֆ. Սրմաքէշխանեան հրաժարական զրկած է:

(Ատենադպիր էֆ. կարգաց հետեւեալ գիրը).

Ազնուաշուք Ատենապետ էֆէնտի Ազգ. Երեսփոխանական Ժողովի Պաշտօնով մեկնած ըլլալով Պոլսէն, կը խնդրեմ որ հաճիք ընդունիլ հրաժարականս ազգային երեսփոխանութենէ:

Մնամ յարգանք
Ս. Սրմաքէշխանեան
Երեսփոխան Բաբերդի

(Ատենապետ էֆ. քուէի զնելով այս հրաժարականը ընդունուեցաւ իբրեւ պարզ հրաժարական)

ՊԱՇՏՈՆԱԳԻՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԱՏԵՆ. ԷՖ.— Կարդանք խառն Ժողովի կողմէ զրկուած մէկ պաշտօնագիրը:

(Ատենադպիր էֆ. կարգաց հետեւեալ գիրը).

Վանաշուք Ատենապետ էֆէնտի Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ

Պատ. Դիւանդ նախորդ ամսոյ 7 թուականաւ գրով ծանուցած էր թէ Ազգ. Ընդհ. Ժողովն իր Հոկտ. 5ի նիստին մէջ ընդունած է Երուսաղէմի վանքին նկատմամբ երեք յօդուածներով ներկայացուած օրինական առժամեայ տրամադրութեանց նախագիծը, չորրորդ յօդուած մ'ալ իր կողմէ աւելցնելով, եւ նշանակած էր զայն:

Ինչպէս մեր Հոկտ. 5ի յայտագրովն պարզուած է արդէն, Ազգ. Վարչութիւնն ձեռք առած է արդէն Ս. Աթոռին բարեկարգութեան խնդիրը, եւ կազմելով 32րդ յօդուածով նախատեսեալ խնամակալութիւնն, երկիցս խորհրդակցած է այն միջոցներուն վրայ՝ որոնցմով կրնայ հնարաւոր դառնալ եւ իրագործուիլ փափաքուած անօրէնութիւնները, ինչպէս որ վերջին անգամ ալ որոշած է պատուիրակութիւն մը յուղարկել՝ մին եկեղեցական եւ միւսն աշխարհական՝ վանքը խաղաղելու, խնամակալութեան պաշտօնն ու գործունէութիւնները զիւրելու ծրագրուած կանոնագրին հիմանց վրայ, եւ որքան հնար է՝ հաշտարար գերով, եւ ի հարկին Պատկ. Ժողովոյդ տուած իրաւասութեան սահմանին մէջ գործելու ազատութեամբ յարգել եւ գործադրել տալու համար Պատկ. Ժողովոյդ որոշումները:

Այսու հանդերձ՝ սակայն դիտելի է որ խնամակալութիւնն որքան որ արտօնուած է անտեսական մարմին մը կազմելու՝ տեղւոյն վրայ անմիջական կերպով գործելու պաշտօնով, եւ ընտրելու զանոնք խառն Ժողովոյ հաստատութեամբ, եւ խնամակալութիւնը կը փափաքի՝ իրեն տրուած իրաւասութեամբ ընտրելի մարմինն ընդ փոյթ ձամբայ հանել. բայց

միւս կողմէ կը տեսնուի որ այս մարմինն պաշտօնին ստորագրեաց գործադրութեան մէջ անհրաժեշտ է ներկայութիւնն Պատկ. Ժողովոյդ կողմէ ընտրելի ներկայացուցչին, որ նախատեսուած է հիմնական կանոնագրի ծրագրին 43րդ յօդուածով, եւ այդ մարմինն չպիտի կրնայ՝ առանց անոր ներկայութեան եւ մասնակցութեան, ո եւ է ձեռնարկ ի գործ դնել:

Հետեւաբար, իրաց այս վիճակին մէջ, կը դիմենք վերստին Պատկ. Ժողովոյդ, եւ կը խնդրենք որ հաճի փութացնել նաեւ թէ 43րդ յօդուածին քուէարկութիւնն, եւ թէ անտեսական մարմինն պաշտօնին ու պարտաւորութեանց վերաբերեալ յօդուածներն, ինչպէս նաեւ իր ներկայացուցչին ընտրութիւնն, որպէս զի վարչական պատուիրակներն երբ ի վիճակի ըլլան մեկնելու, անոնց հետ թէ՛ նոյն ներկայացուցչին եւ թէ՛ մատակարար մարմնոյն անդամները կարենան միասին մեկնիլ, եւ հաւաքաբար ձեռնարկել ի գործ:

Մնամք խորին յարգանք
Ի դիմաց Ազգ. Կեդր. Վարչ. խառն Ժողովոյ
Դիւան Կրօնական Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Երուանդ Վրդ. Մ. Ե. Տերուհեան
Դիւան Քաղաքական Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Տէր. Կ. Յ. Փաւսթեան Ս. Գաւաթեան

Յ. ԷՖ. ՇԱՀԻԿԵԱՆ. — Իբրեւ խորհրդարանական Յանձնաժողովոյ անդամ, Վարչութեան հետ կատարուած բանակցութեան մասին սրբագրութիւն մը կ'ուզեմ ընել: Լսուելով որ Վարչութիւնը իր կողմէ մէկ եկեղեցական եւ մէկ աշխարհական պատուիրակ կ'ուզէ զրկել, դիմել ասինք թէ Վարչ. խառն այս պարտաւոր էր խորհրդակցել եւ պէտք էր խորհրդակցէր, Վարչութիւնը իր քիսալը ըմբռնեց եւ եկաւ այն եղրակացութեան թէ Երուսաղէմի խնամակալութիւնը պարտաւոր է երթալ եւ ընել այն կարգադրութիւնը զոր պատուիրակութեան կ'ուզուի վերադրել, ասոնց եկեղեցական մ'ալ պիտի ընկերանայ, բայց խնամակալութեան կամ

խորհրդարանական Յանձնաժողովոյ անդամներէն հոգեւորական մը, հետեւաբար եկեղեցական եւ աշխարհական պատուիրակի տեղ խնամակալութեան մեծամասնութիւնն է որ պիտի երթայ, եւ որպէս զի այս մարմինը կարենայ ընթացք տալ գործոյ, Ազգ. Ժողովոյ որոշուեցաւ առաջարկել որ կարգէ իր ներկայացուցչը: Տեղեկագրին այդ մասը պէտք է այդ կերպով սրբագրել:

ՏՐ. Ս. ԹԵՐԱՇԵԱՆ ԷՖ.— Վարչութիւնը ուզեց որ Ազգ. Ժողովէն քուէարկուեալ 3 յօդուածներով գործի սկսի անմիջապէս եւ նկատելով որ առանց Ազգ. Ժողովի ներկայացուցչին ո եւ է որոշում չկրնար տալ անտեսական պատուիրակը, ուստի արդիւնք մը յառաջ բերելու համար խորհեցաւ որ Վարչութիւնը ինք ներկայացուցիչ նշանակէ, որոց գործը պիտի ըլլար խաղաղարար միջոցներ ձեռք առնել: Այդ մասին որոշում տրուած չէր տակաւին այլ տեղի ունեցածը խորհրդակցութիւն մ'էր միայն, մէկ խօսքով խրկուելիք եկեղեցական եւ աշխարհականը, պատգամաւորութիւն ըլլալէ աւելի Վարչութեան ներկայացուցչի հանգամանք պիտի ունենան, դիւրացնելու համար Ազգ. Ժողովէն քուէարկուած օրէնքին գործադրութիւնը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Յանուն Վարչութեան տրուած բացատրութիւնը լուսաբանեց այս խնդիրը, հետեւաբար կ'անցնինք ուրիշ խնդրի:

ԿՐԹԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԻ
ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆ. ԷՖ.— Վարչութեան մէկ գիրը կայ Կրթական Ծօնոթի Յանձնաժողովի մասին,

(Ատենադպիր էֆ. կարգաց հետեւեալ գիրը).

Ազնուաշուք Ատենապետ էֆէնտի Ազգային Պատկ. Ընդհ. Ժողովոյ Պատկ. Ժողովդ՝ Հայ աստեղու գիւ-

տին 1500ամեակին եւ տպագրութեան 400ամեակին Յորեկեանի հանդէսին առթիւ Ազգ. երեսփոխան Վահան էֆ. Փափագեանի առաջարկութեամբ՝ յատուկ Յանձնաժողով մը կազմած էր, որպէս զի մէկ ասարեայ ընթացքի մէջ նուէր հաւաքէ՝ կրթական հիմնական դրամագլուխ մը կազմուելու համար, ինչպէս յանձնարարած էր Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետը, եւ անուանած էր այս Յանձնաժողովին տասներկու Պատ. անդամները:

Մայր Դիւանի Հոկտ. 10ի զեկուցման համաձայն՝ նոյն Պատ. Յանձնաժողովոյ անդամոց արդէն իրենց պաշտօնն ծանուցուած եւ հրաւիրուած լինելով ի գործ, անոնց կողմանէ եղած առաջարկութեան մը վրայ՝ ի վերջոյ Յանձնաժողովոյ անդամակցութեան կոչուած են նաեւ հետեւեալ եօթն Պատ. ազգայիններն՝ որոնք են. Արշակ էֆ. Գարակէօզեան, Պատ. Արսէն էֆ. Շմաւոնեան, Արտաշէս էֆ. Հիւրմուշ, Լեւոն էֆ. Թօփալեան, Կարապետ էֆ. Իւրաքանոսեան, Տօքթ. Համբարձում էֆ. Նազգաչեան եւ Միքայէլ էֆ. Մարըր: Հետեւաբար, այս անօրէնութիւնն կը փութանք հաղորդել Պատկ. Ժողովի՝ ի հաստատութիւն, եւ այս առթիւ իր նկատառման կը յանձնենք նաեւ Յանձնաժողովոյ նախկին անդամներէն Եղուարդ էֆ. Գարակէօզեանի Հոկտ. 19 թուականու մէկ գրութիւնն, որով իր զբաղմանց եւ տրամադրելի ժամանակ չունենալուն պատճառաւ հրաժարական մատուցած է այդ պաշտօնէն:

Մնաժք աղօթարար

Պատր. Տեղապահ

Գաբրիէլ եպս. ձեկախիւրեան

ԱՏԵՆ. ԷՖ.— Նոյնպէս եւ այս հարցի մասին զիւր մը ուղղած է ազգ. երեսփոխան Վահան էֆ. Փափագեան նամակ մը ունի նաեւ ձանկրելեան էֆ.:

(Ատենադպիր էֆ. Կարդաց հետեւեալ գրերը):

Ազնուաշուք ատենապետ Էֆէնտի

Ազգ. Ընդհ. Ժողովոյ

Վեհ. Կաթողիկոսի թեկադրութեան եւ իմ առաջարկութեանս վրայ, գրեթե

գիւտի եւ տպագրութեան Մեծ Տօնին նախընթաց օրը, Ազգ. Ժողովը պաշտօնապէս բացուած հոչակեց կրթական ֆօնտը: Դժբաղդաբար սակայն, անցած օրերու մէջ, այս նպատակով Ազգ. Ժողովին կողմէ ընարուած Յանձնախումբը, կարծեմ գործի իսկ ձեռնարկած չէ:

Համազգային բնոյթ ունեցող այսպիսի ձեռնարկ մը արժանի չէր դատապարտելի այսքան անհոգութեան եւ Ազգ. Ժողովէս հանգիստաւորութեամբ հոչակուած որոշում մը անգործադրելի թողուլ, չի կրնար համաձայնիլ գերագոյն սոյն Ժողովին հեղինակութեանը եւ Ազգին զգացումներուն:

Ուստի կ'առաջարկեմ, որ Ժողովս իր յանձնարարութիւնը կրկնէ ուժգնապէս եւ ստիպէ Յանձնաժողովը գործի ձեռնարկելու: Ենթադրուի ազգ. երեսփոխան Վահան Փափագեան

Ազնուաշուք Ատենապետ Էֆէնտի

Ազգային Երեսփ. Ընդհ. Ժողովոյ

Ազնուաշուք Տէր,

Նորին Վեհափառութիւն Տ. Տ. Գէորգ Սրբազան Հայրապետը իր կոնդակով կը հրահանգէր գիրերու գիւտի 1500 եւ տպագրութեան 400ամեակներու յորեկեանները անել խիստ վայելուչ եւ պատշաճաւոր կերպով եւ միանգամայն ի նպաստ կրթական ֆօնտին հանգանակութեան ձեռնարկել. ընկան էր որ Ժողովս ընդհուպ պիտի գործադրէր Նորին Վեհափառութեան հրամանը, որով ընտրուեցաւ հանգանակիչ Յանձնախումբը:

Ինչպէս կը լսենք, Պատ. Յանձնախումբը գեռ ու եւ է գործնական քայլ առած չէ: Քանի որ մեր Ռուսահայ եղբայրները արդէն վաղուց հանգանակութեան ձեռնարկած են եւ կը շարունակեն դեռ, իսկ Թրքահայոցս սպասողական եւ անտարբեր վարմունքը բնաւ պատուարիչ չկրնար ըլլալ, մանաւանդ որ հիմնուելիք ուսումնարանները Հայաստանի մէջ պիտի ըլլան:

Արդ, կ'առաջարկեմ որ հանգանակութիւնը բաթճրէն այս Ժողովէն սկսի, որպէս զի Ժողովուրդը փութայ սիրայօժար

մասնակցիլ հանգանակութեան. ուստի ի նպաստ սոյն կրթական ֆօնտին կը նուիրեմ քսան օրինակ «Յիշատակներ Հայկական ճգնաժամէն»:

Մնամ յարգանք

Ազգ. երեսփոխան

Յ. Կ. ձանկրելեան

Ամենապատիւ Սրբազան Հայր,

Պատիւ ունեցայ ստանալու Ձեր Սրբազնութեան 10 Հոկտեմբեր թուական գրութիւնը, որով կրթական ֆօնտի Խորհրդարանական Յանձնաժողովի անդամ ընտրուիլս, նաեւ նոյնի 18 թուական հրաւիրագրով յառաջիկայ երկուշաբթի առաւօտ ինիստ հրաւիրուելս կ'իմացնէք ինձ:

Մատուցանելով շնորհակալութիւններս ինձ եղած պատուոյն համար, կը ցաւիմ յայտնել որ այս միջոցներուս մի քանի բացառիկ զբաղումներ ամենեւին տրամադրելի ժամանակ չեն թողուր ինձ մասնակցելու Պատ. Յանձնաժողովին աշխատութեանց որչափ ալ համակիր ըլլամ անոր նպատակին:

Ուստի, կուգամ խնդրել որ ներողամիտ ըլլալով ինձ՝ հաճիք ընդունիլ վերջնական հրաժարականս:

Մատչելով ի համբոյր Ս. Աջոյ Սրբազնութեանդ

Յարգանք

Եղ. Գաբրիէլեան

Ամեն. Գաբրիէլ եպիսկ. Ճէվահիրճեան

Նախագահ Խառն Ժողովոյ

Ազգ. Կեդր. Պատկ. Վարչութեան

Պատիւն ունեցայ ստանալու Հոկտ. 22 եւ 27 թուահամարու Ձեր գրութիւնը, որով կը ծանուցուէք ինձ թէ ես եւս անդամ ընտրուած եմ այն Յանձնաժողովին որուն յանձնուած է կրթական զբաղմունքները մը կազմելու հոգը:

Փափաքելով հանդերձ օգտակար ըլլալ սոյն Յանձնաժողովին, կը ցաւիմ որ չպիտի կարենամ գործօն դեր մը ստանձնել, բոլոր արամադրելի ժամանակս արդէն առնուած ըլլալուն:

Կը խնդրեմ ուրեմն Ձեր Սրբազնութեանէն՝ որ բարեհաճիք ընդունիլ հրաժարականիս հետ, խորին յարգանքս հաւաստին:

Արեակ Գաբրիէլեան

Յ. ԷՖ. ՇԱՀՐԻԿԵԱՆ. — Այս խնդիրը պէտք չէր որ հոս բերուէր. ասիկա վարչութեան գործն է, եւ այս Ժողովը չի կրնար զբաղիլ առով...:

ՀՐԱՆՏ ԷՖ. ԱՍՍՏՈՒՐ. — Շահրիկեան էֆ.ի զիտողութիւնը շատ ճիշդ է, բայց զիտել պիտի տամ որ այդ Յանձնաժողովը Ազգային Ժողովէն ընտրուած է:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — (Ընդմիջելով). Ազգային Ժողովը ընտրել է Յանձնաժողովը՝ առանց նկատի ունենալու անձնաւորութիւնները, եւ հիմայ ալ այս վիճակին հանդէպ կը գտնուինք: Քանի որ հիմա կազմութեան խնդիր կը ներկայանայ գործը այլեւս վարչութեան վերադարձնենք, թող ան հրաւիրէ այն անձնաւորութիւնները որոնց հետ որ կրնայ գործակցիլ, եւ առանց ժամավաճառ ըլլալու գործին մղում թող տայ:

ՀՐԱՆՏ ԷՖ. ԱՍՍՏՈՒՐ. — (Շարունակելով) Ես ցաւով պիտի հաստատեմ որ այդ Յանձնաժողովը բան մը չէ ըրած, եւ տակաւին գործի իսկ ձեռնարկած չէ: Ասկէ առաջ երբ հաւաքուեցանք, կարելի չեղաւ ատենապետ մը գտնել, եւ այս էր պատճառը որ Յանձնաժողովը հարկ տեսաւ վարչութեան դիմելու: Վարչութեան կողմէ ընտրուած անձնաւորութիւններն ալ չուզեցին ստանձնել իրենց պաշտօնը՝ Ազգային Ժողովին կողմէ ընտրուած չըլլալով:

ՎԱՐԴԳԵՍԷՍ ԷՖ. — Ես կը ցաւիմ որ խնդիրը այս կերպով կը ձգձգուի: Ինչպէս որ Երուսաղէմի Յանձնաժողովն ալ, հակառակ չորս ամիսէ ի վեր ընտրուած ըլլալուն, տակաւին գործի չէ ձեռնարկած, միեւնոյն բանը կը պատահի հիմայ ալ: Անցաւ ծափի ու խանդավառութեան չորջանը եւ չեմ յուսար որ ասկէ ետքը կարելի ըլլայ բան մը հաւաքել: Ինքզինքնիս չխաբենք, Ժողովուրդն ալ չխաբենք, աւելորդ տեղն ալ յանձնաժողով չկազմենք:

ՀՄԱՅԵԱԿ ԷՖ. ԱՐԱՄԵԱՆՏ. — Եթէ

ծափերու շրջանը անցած ըլլայ իսկ, եւ եթէ նոյն իսկ շատ աւելի աննպաստ կացութեան մը մէջ ալ գտնուինք, պէտք է որ ետ չկենանք այս գործէն, այսօր իսկ վերակազմենք յանձնաժողովը, ընտրենք զիւանը, եւ հանգանակութեան սկսինք այստեղէն իսկ, որպէս զի արձագանգ գտնէ ժողովուրդին մէջ:

ԱՐՄԵՆԱԿ ԷՖ. ԲՍՐՍԵՂԵԱՆ. — Այո՛, բայց դրամով, եւ ո՛չ թէ գիրքերով:

ԱՏԵՆ. ԷՖ. — Նոյն իսկ եթէ Ազգ. Ժողովէն ալ սկսինք, Յանձնաժողով մը անհրաժեշտ է. ուստի ասիկա զրկենք Ս. Պատրիարքին որպէս զի տրամադիր անձերէ յանձնաժողով մը կազմէ եւ գործի սկսի:

ԶԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛:

ԱՏԵՆ. ԷՖ. — Ընդունուեցաւ ուրեմն:

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆԻ

ԱՏԵՆ. ԷՖ. — Զօհրապ էֆ.ի կրթական առաջարկը զրկուած էր Դաստիարակութեան Դիւանին որ գիւտնիս ուղղած է հետեւեալ գիրը, կարդանք:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ գիրը.)

Վսեմ. Ատենապետ էֆէնտի

Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ,

Մայր Դիւանիդ կողմէ՛ ըստ Ազգ. Ժողովոյ յանձնարարութեան, Դաստիարակութեան Դիւանին զրկուած էր Ազգ. Երեսփոխան Գրեգոր Զօհրապ էֆ.ի Ազգ. կրթութեան վերաբերեալ ստիպողական առաջարկի գրութիւնը առ ի քննութիւն եւ անդեկադրութիւն:

Դաստիարակութեան Դիւանն նկատողութեան առնելով այդ առաջարկը, զիտեց թէ դրամական խնդիր մ'ալ կը չօշափէ նոյն առաջարկը, ինչ որ պիտէին հետ կապ ունի եւ հետեւաբար Եւրոպական Դիւանին ալ կարծիքն ու խորհրդածութիւնը առնել հարկ է:

Այս պատճառով Դիւանն կը կարծէ թէ նոյն առաջարկ-գրութեան մէկ պատճէնն

ալ Եւրոպական Դիւանին զրկել պէտք է, որպէս զի ան ալ իր կարծիքը բերէ Ազգ. Ժողովին, ինչպէս որ Դիւանն կը խոստանայ իր տեսութիւնները եղրակացնելով ներկայացնել մինչեւ առաջիկայ նիստը:

Մնամք անդամք
Դաստիարակութեան Դիւանի
Մ. Նաթանեան, Հրանս Ասատուր

ԱՏԵՆ. ԷՖ. — Ուրեմն Համարակալութեան զիւանին եւս կը զրկենք:

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆԻ

ԱՏԵՆ. ԷՖ. — Ազգային տուրքի բարեփոխման մասին համարակալութեան Դիւանին կողմէ գիր մը ուղղուած է. կարդանք:

(Այս գիրը Քաղ. Ժողովի տուրքի կանոնադրին հետ առանձին տպագրուելով ցրուած է Երեսփոխանաց):

ԵԴ. ԷՖ. ՇԻՐԻՆԵԱՆ. — Ստիպողականութիւնը ընդունելով օրակարգ անցնենք, խնդիրը շատ կարեւոր է: Մէկ կողմէ կ'ըսէք թէ հասոյթի ազբիւրները շատ անբաւական են, եւ միւս կողմէ թոյլ կուտաք որ ձգձգուի եթէ կ'ուզէք որ տպագրուի նախապէս, լա՛ւ ուրեմն, տպագրութեան թող տրուի:

Մ. ԷՖ. ՆԱԹԱՆԵԱՆ. — Եթէ տպագրուի եւ նորէն հոս վերագործուի, երկար պիտի տեւէ: Փոխանակ ասոր, կանոնադիրը հոս թող կարգացուի յօդուած առ յօդուած:

ԱՏԵՆ. ԷՖ. — Քանի որ հիմնական փոփոխութիւններ կան, պէտք է որ անմիջապէս զրկենք տպագրութեան և ցրուենք, եւ հիմա անմիջապէս անցնինք օրակարգին:

ՕՐԱԿԱՐԳ
ՔՆՆՈՒԹԻՒՆ ԾՐԱԳՐԻ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ
ՎԱՆՈՒՑ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՏԵՆ. ԷՖ. — Կարգանք նախ 30, 43 եւ 44րդ յօդուածները, Վարչութեան առաջարկին համաձայն:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ յօդուածները)

Յօդ. 39. — Տնտեսական մարմնի նիստերը եւս օրինաւոր չեն կրնար համարուիլ: Եթէ Ազգ. Երեսփ. Ժողովի ներկայացուցիչը ներկայ չի գտնուի, օրուն հաւանութիւնը անհրաժեշտ է տրուած որոշումներու գործադրութեան համար:

Յօդ. 43. — Խառն մարմնի նիստերուն օրինաւորութեանը համար եւս անհրաժեշտ է Ազգ. Երեսփ. Ժողովի ներկայացուցիչին ներկայութիւնը եւ ատենագրութեանը մէջ ստորագրութիւնը: (Տես յօդ. 23 եւ 39):

Յօդ. 44. — Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովն ու Ս. Երուսաղէմի Յակոբեանց վանուց վարչութեան բոլոր մասերուն վրայ իր հսկողութեան իրաւունքը տեղւոյն վրայ անմիջական կերպով կը գործադրէ իր կողմէ ընտրուած ֆինայուն ներկայացուցչի մը միջոցաւ:

Յ. ԷՖ. ՇԱՀՐԻԿԵԱՆ. — Յանուն վարչութեան քիչ առաջ բացատրութիւն տրուեցաւ արդէն: Վարչութիւնը եթէ անդրադարձած լինէր օրէնքին վրայ, այս յօդուածներու անջատաբար քուէարկութեան պէտք չկար, այլ անոնք իրենց կարգին կը քուէարկուէին:

ՏՕՔԹ. ԹԷՐԶԵԱՆ ԷՖ. — Յանուն վարչութեան չեմ խօսիր, բայց կ'ըսեմ թէ վարչութիւնը իւրացուցած է ու կը բերէ այս յօդուածները և անիկախորհրդով ըմբռնած ըլլալով կը տեսնէ թէ մէկը միւսին կապուած է: Հետեւաբար կրնաք վստահ ըլլալ թէ երբ այս 3 յօդուածները կը ներկայացնէ վարչութիւնը՝ ըմբռնած է անոնց իրարու հետ ունեցած առնչութիւնը:

Ե. ԷՖ. ՇԻՐԻՆԵԱՆ. — Ես այս ամէսնուն մէջ սկզբունք մը կը տեսնեմ, կ'ուզեն վանքը աշխարհականացնել, Քօնպեան սեփիւղադիպոսին է որ իրականացնել կ'ուզեն, հետեւաբար պէտք չէ հապճեպով որոշում մը տալ:

ԱՏԵՆ. ԷՖ. — Աւելորդ է այդ դիտողութիւնը ընել. ատար ատենը անցած է,

քանի որ հիմա կանոնադրութիւնը յօդուած առ յօդուած կը քննուի արդէն:

ԺԱԳ. ԷՖ. ՍԱՅԱՊԱԼԵԱՆ. — Ներկայացուցչի ընտրութեան համար պէտք չկայ նոր քուէարկութեան Ատիկա ընդունուած է արդէն, եւ ասոր համար յօդուած առ յօդուած ցատկելու ալ պէտք չկայ, բոլոր յօդուածները իրարու կապուած են արդէն: Հետեւաբար կրնանք ընտրութիւն կատարել:

ՎԱՐԴԳԷՍ ԷՖ. — Երրորդ անգամն է որ այս յօդուածները կը բերուին երեք յօդուած քուէարկեցինք եւ չգործադրեցինք. հիմակ ալ անոր ստորագրելները կը բերուին: Ես կ'ըսեմ որ վարչութիւնը գործ տեսնել չուզեր, ինչ է պատճառը. եթէ կայ պատճառ մը, թո՛ղ պարզէ զայն, եթէ անկարող է, թո՛ղ հրաժարի:

ԱՏԵՆ. ԷՖ. — Յօդուածներու քննութիւնը կարգաւ առաջ պիտի տանինք թէ վարչութեան նախընտրած յօդուածներուն առաջնութիւն պիտի տանք, եթէ այսպէս է, ապա ուրեմն 43րդ յօդուածը որ 44ի վերածուած է, քուէի կը դնեմ: Ուստի մեծամասնութեամբ ընդունուած է 43րդ յօդուածը:

ՏՔԹ. ՓԱՇԱՅԵԱՆ ԷՖ. — Այս յօդուածը ընդունուելէ ետքը, պէտք է ընտրութիւն կատարել:

ԱՏԵՆ. ԷՖ. — Մինչեւ Դրդ յօդուածը կարդացած էինք, հիմայ կ'անցնինք Դրդ յօդուածին:

Յօդ. 7. — Միաբանութեան անձնիւր անդամ անձնական սեփականութեան իրաւունքով ինչք կամ կալուած կրնայ ունենալ: Միայն թէ, սեփականատէր միաբանը կալուածներուն վարձը կամ եկամուտը ի կենդանութեան անձնապէս վաւելելով հանգերձ՝ կալուածը վազժէ կամ նեփի միւլի եղանակով եւ կամ պետութեան տիրող օրէնքի տրամադրութեանց համաձայն, պաշտօնապէս վանքի անուն փոխանցելու եւ փոխանցումը հաստատող օրինական վաւերագրերը Տնտեսական վարչութեան յանձնելու պարտաւոր է:

ՍՍՐԳԻՍ ԷՖ. ՄԻՆԱՍԵԱՆ.— Զէ նշա-
նակուած թէ միաբանութիւնը իրաւունք
ունի՝ կալուած ծախելու. պէտք է ճշդել
ատիկա:

ԶԱՅՆԵՐ.— Կայ արդէն:

ԺԱԳ ԷՖ. ՍՍՅԱՊԱՆԵԱՆ.— Ատիկա՝
վանքին կալուածներուն համար է:

ՀԱՅԿ ԷՖ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ.— Միաբա-
նութեան անձնական սեփականութիւնը
պէտք է որ վանքին անունով ըլլայ. միայն
թէ որպէս զի շատ որոշ ըլլայ ատիկա,
պէտք է աւելցնել «մինչեւ իր մահը».
հակառակ պարագային, այդ յօդուածը
կրնայ դժուարութիւն պատճառել:

ԴԱԻԻԹ ԷՖ. ՏԷՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ.—
Առանց փոփոխութեան կրնայ ընդունուիլ
Օրինագիծը կ'ըսէ որ ամէն մէկ միաբան
կրնայ սեփական կալուած ունենալ, բայց
ասիկա պետական օրէնքով կ'ըլլայ, պայ-
մաններով կ'ըլլայ. եթէ իր անձին վրայ
չըլլայ եղած իր սեփականութիւնը չըլ-
լար, ժողովը կ'ընդունի թէ միաբանները
սեփական կալուած կրնան ունենալ թէ
ոչ: Պէտք է այս յօդուածը ընդունիլ նոյ-
նութեամբ:

Տ. ԵԶՆԻԿ ՎՐԴ. ՊԱՊԱՅԵԱՆ.— Եւրի
օրէնքով եւ վաղի գրութեամբ եկեղե-
ցական մը ե'րբ որ սեփական կալուած
ունենայ, մինչեւ իր մահը կրնայ վայելիլ,
արդէն հողը ազգինն է եւ կալուածը չին-
ուած է անոր վրայ. հետեւաբար ուզած
ատենը չկրնար ծախել, որպէս զի կո-
րուստ ըլլայ:

ԱՏԵՆ ԷՖ.— Անոնք որ կ'ուզեն ան-
փոփոխ ընդունիլ յօդուածը, թող ձեռք
բարձրացնեն: Ուրեմն 7րդ յօդուածն ալ
ընդունուեցաւ 28 քուէով:

ԱՏԵՆ. ԷՖ.— 8րդ յօդուածը կարդանք.

Յօդ. 8.— Երեսուցէ մի Ս. Յակոբայ
վանքն է օրինական ժառանգորդը Միա-
բանութեան իւրաքանչիւր անդամին՝ վախ-
ճանաւ միաբաններու շարժական, անշարժ
ամէն մէկ գոյքն ու սեփականութիւնը՝

ուր որ ալ գտնուի, ժառանգաբար վանքին
միայն կը պատկանի ու անոր կը յանձ-
նուի:

ԱՏԵՆ. ԷՖ.— Միաձայնութեամբ ըն-
դունուած է այս յօդուածն ալ:

ԱՏԵՆ. ԷՖ.— Կարդանք 9րդ յօդուածը.

Յօդ. 9.— Միաբաններու եկեղեցական
աստիճաններու բարձրացման եւ վերոյն-
եալ յօդուածներով սահմանուած պայման-
ներու վերաբերեալ կանոններ ու մանրա-
մասնութիւններ ներքին կանոնագրով ա-
ռանձին ճշդուած են:

ԱՏԵՆ. ԷՖ.— Ընդունուեցաւ 9րդ յօդ-
ուածն ալ:

ԱՏԵՆ. ԷՖ.— 10րդ յօդուածը պիտի
կարդանք:

Յօդ. 10.— Միաբանութիւնը պարտաւոր
է Երեսուցէ մի Տնօրինական Ս. տեղեաց
մէջ Հայաստանեաց Եկեղեցւոյ եւ Ազգին
գարաւոր իրաւունքներն ու Սրբութիւն-
ները անվթար եւ անխախտ պահել: Եկե-
ղեցիի նախագահական կարգապահու-
թիւններուն կատարեալ համակերպութիւն
ցոյց տալ: Ըստ այսմ, իւրաքանչիւր միա-
բան անպայման պարտաւոր է ընդունիլ
վանական վարչութեան կողմէ իրեն
յանձնուած պաշտօնն ու պարտականու-
թիւնը եւ զայն անթերի կատարել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ընդունուեցաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Յօդուած 11րդ.

Յօդ. 11.— Երեսուցէ մի Պատրիարքը
կամ Տեղապահը, իբր պետ Ս. Յակոբեանց
վանքի Միաբանութեան, վանական վար-
չութեան բոլոր ճիւղերուն կը նախագահէ:
Ի բացակայութեան Ս. Պատրիարքին կամ
Տեղապահին, Պատր. Փոխանորդն է որ կը
կատարէ սոյն պարտականութիւնը: Խոր-
հրդակցութիւնները կը վարէ իւրաքանչիւր
մարմնի ատենապետը, ներքին կանոնագրի
տրամադրութեան համաձայն:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ.— Ծրագրին մէջ իրենց
բացակայութեան ըսուած է, իր պիտի ըլ-
լայ, որովհետեւ տեղապահի բացակայու-

թեան ոչ ոք կայ ներկայացուցիչ, տեղա-
պահը փոխանորդ չունի:

Դ. ԷՖ. ՏԷՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ.— Պատ-
րիարքը կամ տեղապահն է որ կը վարէ
Ժողովները, իսկ իրենց բացակայութեան,
փոխանորդն է որ կը վարէ, շատ պարզ
է այս. բայց այս կէտերը կանոնագրին
մէջ դրուեցաւ որպէս զի գիտնան թէ,
վանական բոլոր ճիւղերուն նախագահել
իրենց իրաւունքը չէ այլ պարտքն է:

ՀԱՅԿ ԷՖ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ.— Պատ-
րիարքին իրաւունքը շատ որոշ է, հետե-
ւաբար օրէնքին մէջ աւելի մանրամասնել
աւելորդ նկատուած է:

Տ. ԵԶՆԻԿ ՎՐԴ. ՊԱՊԱՅԵԱՆ.— Հա-
մակարծիք եմ Խօճասարեան էֆ.ի, բայց
Տնօրէն Խորհուրդին մէջ փոխանորդի պաշ-
տօն չկայ. հիմայ հոս փոխանորդի իրա-
ւունք մը կը տրուի:

ՀՐԱՆՏ ԷՖ. ԱՍՍՏՈՒՐ.— Ես կ'առա-
ջարկեմ սապէս ըսել «Ի բացակայութեան
Պատրիարքին կամ տեղապահին»:

ԴԱԻԻԹ ԷՖ. ՏԷՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ.—
Հիմա հոս գիտենք որ իրաւունքի եւ
պարտքի գիտակցութիւնը կայ. Երբ աղ-
պէս գրուի Պատրիարքը կամ Տեղապահը
իր նախագահութիւնը չի կատարել, մինչ-
գեռ եթէ օրէնքը պարտադրէ, անկա կը
պարտաւորուի նախագահել: Ասոր մէջ
նախատական բան չկայ:

ԱՏԵՆ. ԷՖ.— Հոս երկու փոփոխութիւն
կ'առաջարկուի:

ՍՄԲԱՏ ԷՖ. ԲԻԻՐԱՏ.— Հրահտ էֆ.
Ասատուրի առաջարկը կ'ընդունինք, Պատ-
րիարքին գոյութեան իրաւունքը նախա-
գահելն է:

Տ. ԶԱՐԲԱՅՐ ՔԶՆՅ.— Միեւնոյն բանը
պիտի ըսեմ՝ աւելցնելով «կը նախագահէ»:
Ասիկա ալ միեւնոյն բանն է. բայց գոնէ
յարգանքի վերաբերեալ մը ցոյց տրուած
կ'ըլլայ:

ՎԱՐԴԳԻՍ ԷՖ.— Ես Հրահտ էֆ. Ասա-
տուրի առաջարկը կ'ընդունիմ, պարտաւոր

է կամ ուրիշ բանի պէտք չկայ. ամէն տեղ
արդէն նախագահին ու ատենապետին դերը
որոշ է եւ երկար վիճաբանութիւն աւե-
լորդ է:

ԱՏԵՆ. ԷՖ.— Ի՞նչի կը գնեմ. ամէն
անոնք որ «պարտաւոր է» գնել կ'ուզեն,
թող ձեռք բարձրացնեն:— («Պարտաւոր է»
խօսքը մերժուեցաւ):— Կարգանք 11րդ յօդ-
ուածը:

ՊԱՐԳԵՒ ԷՖ. ՓԱՓԱԶԵԱՆ.— Կը տես-
նուի որ այստեղ շատ մեծ կարեւորու-
թիւն չընծայուի օրէնքին մէջ բառերու
նշանակութեան: «Պէտք չէ գնել» կ'ըս-
ուի: Բայց նկատի ունեցէք որ երբ Յանձ-
նաժողովը երկար փորձառութեան մը
ետքը այս կանոնագիրը պատրաստեց,
պատճառը ուրիշ բան չէր բայց
եթէ այն որ պարտականութիւնները եւ
իրաւունքները որոշապէս ճշդուին, որպէս
զի յետոյ խուսափողական բաներ չըլլան:
Ասոր համար ես կը ձայնակցիմ Դաւիթ
էֆ.ի եւ կ'ըսեմ թէ «պարտաւոր է»-ն
պէտք է:

ԱՏԵՆ. ԷՖ.— Ամէն անոնք որ որոշ
կերպով կ'ուզեն ճշդել թէ «ատենապետը
պարտաւոր է», թող ձեռք բարձրացնեն:—
Ուրեմն, ընդունուեցաւ. որ «ատենապետը
կը վարէ» ըսուի:

ԱՏԵՆ. ԷՖ.— Պիտի կարգանք 12րդ
յօդուածը. բայց հիմա վայրկեանի դադար
կուտանք:

(ԴԱՎԱՐԷՆ ՎԵՐՋ)

ԱՏԵՆ. ԷՖ.— Կը շարունակենք յօդ-
ուածներուն վիճաբանութիւնը:

Յօդ. 12.— Միաբանութեան որ եւ է
անդամի դէմ ամէն մէկ միաբան կամ որ
եւ է ազգային անհատ բողոքելու եւ ամ-
բաստանութիւններ ընելու իրաւունք ունի:
Բողոքներն ու ամբաստանութիւնները
կրնան հաւաստարպէս ներկայացուիլ:

Ա.— Ս. Պատրիարքին:

Բ.— Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովի ներ-
կայացուցիչին:

Գ.— Ազգ. Կեդր. վարչութեան:

ՏՕՔԹ. ՊԵՆՆԵ ԷՖ. — Կանոնագրի ծրագրին մէջ գրուած էր որ բողոք պիտի կրնար ըլլալ նաեւ Միաբանական Ընդհ. ժողովին եւ Տնօրէն ժողովին, ինչո՞ւ համար Յանձնաժողովին մէջ վերցուած է, քանի որ անոնք աւելի լաւ կրնան գիտնալ բողոքներու արժէքը:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԷՖ. ՊՅԱՆՆԵԱՆ. — Եթէ բողոք ըլլայ նախ որո՞ւն պիտի ըլլայ:

ՄԱՐԿՈՍ ԷՖ. ՆԱԹԱՆՆԵԱՆ. — Ազգային Սահմանադրութեան համաձայն, ամէն անհատ իրաւունք ունի բողոքելու ո եւ է զեղծութիւն առթիւ. հետեւաբար այդ յօդուածը բողոքովին աւելորդ է: Յետոյ, ճշգրտած է թէ առաջին անգամ որո՞ւ բողոք պիտի ըլլայ, և յետոյ որո՞ւն Պէտք է աստիճանաւորուի մը գտնուի եւ ասիկա յայտնի չէ այս գրուածէն, օրինակի համար, Ազգ. ժողովի ներկայացուցիչն զիմեով գոհացում չգտնուած պարագային պէտք է դիմէ իրմէ աւելի մեծ ստանի մը, պէտք է այս շարքը պահուի ոչ թէ ըսուի որ ուղէ կեղք. վարչութեան, ուղէ Երեսփ. ժողովի ներկայացուցիչն, ուղէ Պատրիարքին բողոքէ: Այս կէտերը պէտք է ճշգրտին այսպէս, նախ պէտք է դիմէ Ս. Պատրիարքին որ եթէ գոհացում չտայ, այնինչ մարմինն:

ՀԱՅԿ ԷՖ. ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ. — Միաբանութեան մէջ պատահած անհրկայանալութեան պարագային, բողոքի առիթ տուող բանի մը համար գիմուի կ'ըլլայ Պատրիարքին որ միեւնոյն ատեն նախագահն է. բայց երբ բողոքողը ինքզինք զրկուած տեսէ, կրնայ դիմել Ազգային ժողովի ներկայացուցիչն եւ ապա Ազգ. վարչութեան: Արդէն երբ Պատրիարքին բողոք ըլլայ, բողոքը եղած կ'ըլլայ Տնօրէն Խորհուրդին: Պատրիարքը ինքը չէ որ պիտի քննէ խնդիրը, այլ Տնօրէն Խորհուրդը:

ՍՄԲԱՏ ԷՖ. ԲԻԻՐԱՏ. — Եթէ միաբաններու բողոքի իրաւունքը պիտի ընդունինք, ինչ հարկ կայ այն ատեն այդքան ճամբաներէ անցնելու: Պատրիարքը եղած բողոքը կը յանձնէ Միաբանութեան Ընդհ. ժողովին, Պատրիարքին իրաւունքն

է զայն նաեւ Տնօրէն ժողովին ներկայացնել: Ամէն պարագայի մէջ Պատրիարքին մատուցուած բողոք մը, միեւնոյն ատեն թէ՛ Տնօրէն եւ թէ՛ Ընդհանուր ժողովներուն կը պատկանի: Իսկ եթէ այդ դիմումներէն յետոյ տակաւին գոհացում չգտնուի, այն ատենն է որ պէտք կ'ըլլայ ուրիշ ատեն մը ցոյց տալ իրեն, ու կը դիմէ Ազգ. ժողովի ներկայացուցիչն:

ԳԵՂԱՄ ԷՖ. Տ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ. — Բողոքներու բնոյթն ալ սահմանուած չէ. նախ ի՞նչ բանի համար պիտի բողոքէ: Մենք այս կանոնագրութիւնը չինքցինք որպէս զի վէճերուն վերջ մը տուած ըլլանք: Յետոյ ներկայացուցիչը Ազգ. ժողովոյ մէջ կ'ընտրուի եւ չենք կրնար անձնական դեր մը տալ, հետեւաբար երբ որ շատ ծանր խնդիրներ ըլլան, այդ պարագային է որ միջամտութիւն պիտի ըլլայ, մենք չենք կրնար թողուլ որ վէճերով ժամանակ անցնի եւ այդ նպատակաւ յօդուածներ ալ սահմանենք:

ՏՕՔԹ. ՊԵՆՆԵ ԷՖ. — Պատրիարքին պաշտօնը սահմանուած է ըսուեցաւ. բայց ատկէ չենթադրուիր որ Պատրիարքը իր անձնական քննութեամբ անօրինութիւններ ընէ: Հետեւաբար ես կ'ըսեմ եւ աւելի նպատակայարմար կը տեսնեմ որ որոշուի թէ ո՞ր ժողովներուն կրնայ դիմել, հետեւաբար եթէ երբեք մենք ժողովներուն գիմումի մասին գրենք, աւելի որոշ լուծում մը տուած կ'ըլլանք խնդիրն:

ԴԱԻԻԹ ԷՖ. ՏԷՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ. — Իրաւ է որ ես ալ համաձայն էի առանձին առանձին գրելու, բայց հիմա կը տեսնեմ որ լծող յօդուածին այդ կէտը չփոթութեան պատճառ կ'ըլլայ հետեւաբար կ'առաջարկեմ քննուիլ երեսփ. Խորհրդարանական մարմինն առաջարկած ձեւով, այսինքն Ազգ. ժողովի ներկայացուցիչն եւ Ազգ. Կեղք. վարչութեան:

ԿՈՊԵՆԻՆԻԿ ԷՖ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ. — Երբ այնտեղ գոհացում չգտնէ պիտի կրնայ դիմել Պոլիս ըսուեցաւ: Երբեք միջամտութիւնը եւ Կ. Պոլսոյ Պատրիարքը ի՞նչ

տարբերութիւն որ ունին, այդ որոշ կերպով պէտք է գրուի:

ԱՐՇԱԿ ԷՖ. ԱԼՊԵՍԱՃԵԱՆ. — Պարզապէս խմբագրութեան ձեւի փոփոխութիւն կ'առաջարկուի, այսինքն պէտք է Երբեք միջամտութիւն չըլլայ որիչ ատեն Պոլսոյ:

ԴԱԻԻԹ ԷՖ. ՏԷՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ. — Ակնարկուած աստիճանաւորումը գոյութիւն չունի, այն պատճառով որ ազգային անհատի մը իրաւունք արուի իր ձայնը լսելի ընել տալ: Եթէ անհատ մը Երբեք միջամտութիւն կամ պէտք չունենայ, ելք չպիտի արուի իր բողոքին: Հետեւաբար բողոքի այս ընդլայնումը կարեւոր է, որպէս զի Յանձնաժողովի տեսակէտը յառաջ գայ:

ՎԱՐԴԳԷՍ ԷՖ. — Ես կը կարծեմ թէ Տ. Պէննէի առաջարկը բողոքովին աւելորդ պիտի ըլլայ, քանի որ Պատրիարքը կը յանձնէ իրեն ներկայացուած դիմումները պատկանեալ ժողովին: Գալով թէ աստիճանաբար եւ թէ՛ հաւասարապէս պէտք է ըլլայ դիմումը, դիմել կուտանք թէ, միայն Ս. Պատրիարքին կողմէ արուած որոշումներէն կրնայ դժգոհ մնացած ըլլալ ու կրնայ նաեւ առանց Պատրիարքին դիմելու, կանոնով սահմանեալ տեղերը դիմելու: Մենք չենք կրնար սահմանափակել կատարուելիք դիմումները:

ՄԱՐԿՈՍ ԷՖ. ՆԱԹԱՆՆԵԱՆ. — Ես ծրագրին մէջ գրուածէն այնպէս կը հասկնամ որ միեւնոյն ատեն եւ հաւասարապէս կարելի է դիմել թէ Պատրիարքին, թէ Ազգ. ժողովի եւ թէ վարչութեան ներկայացուցիչն, եթէ այդպէս չէ ո՞րն է նախագահը, պէտք է ճշգրտել: Գիտենք թէ Պատրիարքն է Ազգ. ժողովի ներկայացուցիչը, եւ սակայն Ազգ. ժողովին ուրիշ ներկայացուցիչ ալ ընտրուած է: Արդ երբ Ազգ. ժողովոյ ներկայացուցիչը կարգադրութիւն մը ընէ ու Պատրիարքը չգործադրէ, ի՞նչպէս պիտի քննուի ու երբ Ազգ. ժողովին ներկայացուցիչն բո-

ղոք մը ըլլայ եւ Ազգ. վարչութեան դիմում ըլլայ, այն ատեն Ազգ. ժողովը վարչութեան հետեւապէս պիտի ըլլայ. ասիկա հակասական է: Կ'առաջարկեմ որ ամէն անհատ երբ զեղծութիւն մը տեսնէ իրաւունք ունենայ բողոքելու կամ Պատրիարքին կամ Ազգ. ժողովոյ ներկայացուցիչին կամ վարչութեան, հետեւաբար «կամ» պէտք է գնել ասոնց մէջ:

Հ. ԷՖ. ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ. — Բողոքները երկու ձեւ կրնան ըլլալ, առաջինը՝ միաբանը միաբանին դէմ, այդ պարագային Պատրիարքին պէտք է դիմել, հոս պէտք չէ դիմել: Ասկէ դուրս, մեր սրբազան յօդուածներով իրաւունք տուինք միաբաններու որ բողոքեն նաեւ Ազգ. ժողովի ներկայացուցիչն եւ վարչութեան, հոս ոչ թէ վանքի աշխարհականացում կայ, այլ այս կերպով միաբանին աւելի մեծ իրաւունք մը կը տրուի, ինչո՞ւ իր բողոքին համար դիմելու մէկէ աւելի տեղեր չունենայ: Այս պարագային միթէ իր բողոքելու մեծ իրաւունքը կաշկանդած չե՞նք ըլլալ: Երկրորդ՝ առարկուեցաւ որ տեսակ մը հակասութիւն պիտի ըլլայ այս աստիճանաւորումը, եթէ Ազգային ժողովի ներկայացուցիչը ո եւ է որոշում տայ եւ այնտեղի Պատրիարքը հակառակի: Չխորհեցան որ Ազգ. ժողովի ներկայացուցիչը ընաւ իրաւունք չունի գործադիր դեր կատարելու, այլ միայն հսկող մըն է: Օրէնքը սահմանած է արդէն իր պարտականութիւնը: Սակայն Միաբանութիւնը իրաւունք ունի նաեւ բողոքելու եւ մտական մարմինոյն դէմ: Չենք ուզեր կաշկանդել Միաբանութիւնը, այնպիսի կաշկանդում մը որ վանքին եւ մտական եւ բարոյական տեսակէտով վնասակար պիտի ըլլայ: Կը տեսնուի ուրիշն որ օրէնքը խմբագրողներու դիմաւորութիւնը եղած է բողոքները լսելի ընել տալու լայն ձեւ մը տալ: Օրէնքին ոգին այս է անա, կը ցաւիմ որ բառերու վրայ շատ կը վիճաբանինք: Ժողովը ունի խմբագրութեան դիւան մը, կրնայ հոն զրկուել օրէնքը որ եթէ անհասկնալի կողմ մը ունի ուղղէ:

ՍՍՐԳԻՍ ԷՖ. ՄԻՆԱՍԵԱՆ.—Բայց իսկապէս բառերն են որ գաղափարները կը սահմանեն եւ կը ճշդեն: Եթէ եկեղեցականին համար նուիրապետական կարգապահութեամբ պէտք է որ նախ Պատրիարքին դիմէ ազատ է այդ դիմումը ընելու, բայց ո եւ է ազգային իրաւունք ունենալու է դիմելու կեդր. Վարչութեան: Եւ կը կարծեմ թէ այս աստիճանաւորումը անհրաժեշտ է:

ԱՏԵՆ. ԷՖ.—Ուրեմն, խնդիրը աստիճանաւորումը ճշդելուն վրայ է: Օրէնքին բուն ոգին երեւան հանելու է:

ԱՐՇԱԿ ԷՖ. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ.—Կարծեմ թէ այս յօդուածը կրնանք երկուքի վերածել. եւ ըսել՝ եկեղեցականի բողոքը կրնայ ներկայացուիլ Պատրիարքին, բայց անհատները իրաւունք ունին դիմելու Պատրիարքին եւ գոհացում չգտած պարագային, Ազգ. Ժողովոյ ներկայացուցչին եւ Վարչութեան:

Յ. ԷՖ. ՊԱՀՐԻ.—Սխալ է Աւստրալիան Էֆ. ի կարծիքը. ամէն մարդ, զիւղի մը թէ քաղաքի մը մէջ, երբ ո եւ է բողոք ունի, իր ուզած տեղը կրնայ դիմել. կ'ուզէ գայմագամին կը դիմէ, կ'ուզէ միւթէսարքին, կ'ուզէ Բ. Դուռ. հետեւաբար պէտք է ազատ թողուլ: Միաբանը եթէ կ'ուզէ՝ թող Պոլսոյ Վարչութեան դիմէ: Վարչութիւնը ի՞նչ պիտի ընէ, պիտի գրէ Երուսաղէմ եւ պիտի լսէ անոնց բացատրութիւնը: Եթէ սահմանափակելով ըսենք որ միաբան մը անպայման Պատրիարքին դիմէ, այն ատեն կրնայ պատահիլ որ բողոքը Պատրիարքին պաշտպանած մէկ միաբանին դէմ ըլլայ:

ԱՐՇԱԿ ԷՖ. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ.—Ես այս օրէնսդրութենէն բան մը չհասկցայ: Անհատ մը կրնայ միեւնոյն ատեն թէ՛ նախագատ ատենին, թէ՛ վերաքննիչ եւ թէ՛ վճռաբեկ ատեններուն դիմելու իրաւունք ունենալ: Եթէ ոչ ի՞նչպէս կարելի է երեք հոգիի միանգամայն դիմել:

ՍՄԲԱՏ ԷՖ. ԲԻԻՐԱՍ.—Քանի որ միաբան մը միաբանի մը դէմ բողոքելու իրաւունք ունի, այն ատեն ասիկա տեղւոյն վրայ կը քննուի. բայց եթէ միաբանին բողոքը ո՛չ թէ միաբանին, այլ օրինակ երեւմտական վարչութեան դէմ է, այն ատեն խնդիրը մը մինչեւ որ չեզերակացուի՝ պէտք է որ հոս գայ. արդէն կեդր. Վարչութիւնը հոս շատ զբաղած է եւ չի կրնար ուղղակի իր կողմէ երկար բարակ քննել խնդիրը:

ՃԱՆԿԻԼԵԱՆ ԷՖ.—Եթէ Ժողովին դէմ է բողոքը, որո՞ւ պիտի դիմէ:

Տ. ԵԶՆԻԿ ՎՐԻ. ՊԱՊԱՅԵԱՆ.—Պէտք է աշխատինք կարծեմ որ Պատրիարք, Միաբանութիւնը բարձր վիճակի մէջ դնենք եւ այդպիսի բողոքները սահմանափակելով, ըսենք որ Երեսի. Ժողովին պատրաստած կանոնադրին դէմ կատարուած զեղծումներու համար բողոքը գայ Ազգ. Կեդր. Վարչութեան:

ՎԱՐԳԻՆԵՍ ԷՖ.—Ինչ նկատումով ալ պատրաստուած ըլլայ օրէնքին այդ յօդուածը, կ'առաջարկեմ այս յօդուածը կրկին Յանձնաժողովին ղրկել, որովհետեւ անոր մէջ կարգ մը բաներ կան որոնք ճշդուած չեն. մենք ալ հապճեպով այդ յօդուածը ընդունելու հարկին մէջ չենք դանուիր:

ԴԱԻԻԹ ԷՖ. ՏԷՐ ՄՈՎՍԵՍԵԱՆ.—Եթէ Ժողովը բաւական չի նկատեր մեր տուած այս բացատրութիւնները եւ կ'ուզէ որ այստեղ ըսենք թէ աստիճանաւորումի պէտք կայ. ասիկա բողոքը պիտի սահմանափակէ: Բայց մեր նպատակը այս չէ, այլ մեր նպատակը այն է որ Երուսաղէմ գացող ուխտաւոր մը եթէ դիտելի կէտ մը նկատէ, ուզէ այնտեղի Պատրիարքին, եթէ ուզէ՝ Ազգ. Ժողովի ներկայացուցչին ներկայացնէ եւ եթէ ուզէ Ազգ. Վարչութեան բողոքելու իրաւունք ունենայ: Կ'ըսէք որ եթէ ամէն անհատ այսպէս բողոքէ, անկանոնութիւն յառաջ կուգայ. ես ասիկա չեմ հասկնար: Երբ բողոք մը ամէն անհատի կ'ըլլայ, այլեւս ատիկա չի սահմանափակուիր: Երբ տեսնէ որ Պատրիարքը աչա-

ռութեամբ կը վարուի, ի՞նչ ընէ. կը բողոքէ նաեւ. անոր որ օրէնքով զինքը լսելու պարտաւոր է, ասիկա նուիրապետութեան դէմ չէ: Հետեւաբար «հաւասարապէս»ը շատ որոշ է, եւ ասոր համար Յանձնաժողովը այդ բառը աւելցուցած է, ամէն պարագայի մէջ երբ բողոքի առարկայ եղած խնդիրը Երուսաղէմի մէջ չկարենայ կարգադրուիլ, այդ պարագային է որ Պոլիս դիմում պիտի ըլլայ:

ՊԱՐԳԵՒ ԷՖ. ՓԱՓԱՋԵԱՆ.—Վիճաբանութիւնը թող փակուի: Ես կ'առաջարկեմ որ յօդուածը նոյնութեամբ ընդունուի, այն տեսակէտով որ, ինչպէս շատ լաւ պարզեց Տէր Մովսէսեան Էֆ., մարդիկ շատ անգամ վարանած են, բողոքը վանքին մէջ ընելու, վախճանով որ եթէ բողոքեն՝ ծեծ կ'ուտեն, որովհետեւ շատ մը միաբաններ կը միանան եւ կը ծեծեն: Պէտք է բողոքելու լայն իրաւունք տալ ամէն անհատի, վասն զի մենք գիտենք որ միաբաններու գիշեր ատեն պառնալիքով ժողով գումարել տրուած եւ Եզրիպտոսի գետին վաճառումը բռնի ընդունիլ տրուած է:

ՍՄԲԱՏ ԷՖ. ԲԻԻՐԱՍ (ընդմիջելով).—Պօղոս փաշայի դիմութեամբը ծախուած է այդ գետինը:

ՊԱՐԳԵՒ ԷՖ. ՓԱՓԱՋԵԱՆ (շարունակելով).—Ղեւոնդ վրդ. սպառնալիք ըրած է եւ գիշեր ատեն միաբաններէն ստորագրութիւն ժողոված, ես այս գիտեմ: Ես կ'առաջարկեմ նոյնութեամբ ընդունիլ:

ԱՏԵՆ. ԷՖ.—Վիճաբանութիւնները բաւ կը համարուին:

ԱՐՇԱԿ ԷՖ. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ.—Վարդգէս Էֆ. ի առաջարկը քուէի դրէք, առաջնութիւնը անորն է:

ՎԱՐԳԻՆԵՍ ԷՖ.—Քանի որ առաջարկ կ'ըլլայ յետաձգման, նախ պէտք է այն նկատողութեան առնուի:

ԴԱԻԻԹ ԷՖ. ՏԷՐ ՄՈՎՍԵՍԵԱՆ.—Ներքին կանոնադրը մէջտեղն է, ամէնէն առաջ Յանձնաժողովին պատրաստած յօդուածները քուէի կը դրուին:

ԱՏԵՆ. ԷՖ.—Ուրեմն պիտի կարդացուի:

(Վերստին կը կարդացուի 12րդ յօդուածը):

ԱՏԵՆ. ԷՖ.—Տի դէմ 14 ձայնով ընդունուեցաւ նոյնութեամբ:

(Ատենը փակուեցաւ ժամը 5ին):

Ատենադպիր	Ատենապետ
Հ. Արամեանց	Տր. Ն. Տաղաւարեան

(Գ. Վիճակ)

Գում գարու, Գումգարուի դուրս

69. Դաւիթ էֆենտի Տէր-Մովսէսեան
70. Համբարձում ՝ Պոյաճեան
71. Սարգիս ՝ Սուրին
72.

Կէտիկ փաշա

73. Հմայեակ էֆենտի Արամեանց
74. Յարութիւն ՝ Ճանկիլեան
75. Յակոբ ՝ Աւետիսեան
76. Յակոբ ՝ Նշանեան
77. Ներսէս ՝ Զաքարեան

Սամաթիա Ս. Գէորգ

78. Գրիգոր էֆենտի Զօհրապ
79. Լեւոն ՝ Սաաթճեան
80. Հայկ ՝ Խօճասարեան
81. Պարգեւ ՝ Փափազեան
82. Լեւոն ՝ Սեդրոսեան
83. Ռուբէն ՝ Փափազեան
84.

(Ե. Վիճակ)

Գումգարուի Կոնստանտին

85. Երուանդ էֆենտի Խորասան
86. Լեւոն ՝ Տէմիրճիպաշեան
87. Ռուբէն ՝ Զարգարեան
88. Ոսկան ՝ Մարտիրոսեան
89. Կոպեւոնիկ ՝ Խաչատուրեան

Թով-գարու

90. Գէորգ էֆենտի Սիմէլեան

Ղալաթիա-Պէյքօղ

91. Երուանդ էֆենտի Օտեան

Նաուլը-գարու

92. Նշան էֆենտի Գալպեան
93. Տիգրան ՝ Դանուկեան

Սամաթիա Ալթըմէրմէր

94. Պետրոս էֆենտի Գալփաեան

Սկիւտար Ս. Խաչ

95. Բարսեղ էֆենտի Աւետիսեան
96. Գարեգին ՝ Տէմիրճիպաշեան
97. Յարութիւն ՝ Շահրիկեան
98. Վարդգէս ՝ Սէրէնկիլեան
99. Յակոբ ՝ Միլասեան

Բումէլի-ճիսար, Պոյաճը-գիւղ, Ենի-գիւղ

100. Արքայաճառ էֆենտի Տէր Յակոբեան

ԳԱՄԱՍԱՍԻՆ ԵՐԵՍՓՈՆԱՆԻ

(Ա. Վիճակ)

Եգիպտոս

101. Վահան էֆենտի Թէրեան
Եւդոկիա

102. Յակոբ էֆենտի Պօնճուզեան

Խարբերդ

103. Տօքթ. Փաշայեան էֆենտի

Կարին

104. Սողոմոն էֆենտի Տէր-Ազարեան

Կիւրին-Մանցրեթ

105. Արամ էֆենտի Անգոնան

Մուշ

106. Գեղամ էֆենտի Տէր-Կարապետեան
Զմշկաձագ-Զարսանճագ

107.

Տրապիզոն

108. Օննիկ էֆենտի Զիֆթէ-Սարաֆ

(Բ. Վիճակ)

Աղթամար

109. Ա. Վառճեան էֆենտի

Բալու

110. Գամէր էֆենտի Շիրինեան

Եօղլատ

111. Աւետիս էֆենտի Ճինիկիզեան

Կեսարիա

112. Վահան էֆենտի Էսաեան

Հալէպ-Այնթապ

113. Սարգիս էֆենտի Գնաճեան

Նիկոմիդիա

114.

Պաղտատ

115. Տօքթ. Ներսէս էֆենտի Թիւլեան

Սղերդ

116. Սերովբէ էֆենտի Նորատունկեան

(Գ. Վիճակ)

Ալին

117. Ատոլմ էֆենտի Երեցեան

Արարկիր

118. Արթուր էֆենտի Սարաֆեան

Եդեսիա

119. Սեպուհ պէյ Իւթիւնեան

Զաքարիա

120. Լեւոն էֆենտի Տնտեսեան

Հաճըն

121. Տէվէթ էֆենտի Տատրեան

Մալաթիա

122.

Պանտրմա-Պալլէսիլ

123. Տիրան էֆենտի Երկանեան

Վան

124.

(Դ. Վիճակ)

Ադրիանուպոլիս

521

Ատանա

- 6.21 Արիստակէս էֆենտի Գասպարեան

Բաղէշ

- 7.21 Աղէքսանդր էֆենտի Փանոսեան

Կուտինա-Աֆիոն-Գարա-ճիսար

128. Զարեհ էֆենտի Խօրասանեան

- Պրուսա
12. Գասպար էֆենտի Նեմցե
Ռոմուսթո
130. Միհրդատ էֆենտի Հալիվազե
Տիգրանակերտ
131. Տիգրան էֆենտի Նագաշեան
Շիվրիկ
132.
(Ե. Վիհակ)
Ամասիա-Մարզուան
133. Տիգրան էֆենտի Մարտիկեան
Բարերդ
134. Յարութիւն էֆենտի Դարբինեան

- Գաղատիա
135. Տր. Խաչիկ էֆենտի Պլուստ
Գոնեսա
136. Բարթող էֆենտի Զօրեան
Երզնկա
137. Գաբրիէլ էֆենտի Նորատունկեան
Մարաշ-Չէյթուն
138. Սմբատ էֆենտի Բիւրատ
Շապին-Գարախիսար
139. Ժագ էֆենտի Սալապալեան
Սերաստիա
140. Տօքթ. Նազարէթ էֆենտի Տաղաւարեան

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

- Ա. Ատենապետ Գաբրիէլ էֆ. Նորատունկեան
Բ. „ Տր. Տաղաւարեան էֆենտի
Գ. „ Պարգեւ էֆ. Փափազեան

- Ա. Ատենադպիր Հմայեակ էֆ. Արամեան
Բ. „ Երուսանդ էֆ. Պէյազեան
Գ. „ Աղեքսանդր էֆ. Փանոսեան

Ն Ա Խ Ա Ք Ն Ն Ի Չ Դ Ի Ի Ա Ն Ք

ՁԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Տ. Հմայեակ Արքեպ. Դիմաքսեան
Բ. Արամ էֆենտի Հալաճեան
Գ. Արշակ էֆենտի Ալփոյաճեան

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Աստուածատուր էֆենտի Խաչատրեան
Բ. Մարկոս էֆենտի Նաթանեան
Գ. Հրանտ էֆենտի Ասատուր

ԿԱԼՈՒԱՇՈՑ ԴԻԻԱՆ

- Ա. Պննոն էֆենտի Տէլիրմէնճեան
Բ. Վահան էֆենտի Էսառեան
Գ. Թորգոմ էֆենտի Պոյաճեան

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Եղուարդ էֆենտի Շիրինեան
Բ. Խաչիկ էֆենտի Սրվաճեան
Գ. Լևոն էֆենտի Տնտեսեան

ՅԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Յարութիւն էֆենտի Մոստիլեան
Գ. Բարսեղ էֆենտի Ասետիսեան
Դ. Նշան էֆենտի Գալպաճեան

ԻՐԱԽԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Տ. Մաղաքիա Արքեպ. Օրմանեան
Բ. Դարեգին էֆենտի Տէմիրճիպաշեան
Գ.

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Դաւիթ էֆենտի Տէր-Մովսէսեան
Բ. Հայկի էֆենտի Խօճասարեան
Գ. Յարութիւն էֆենտի Շահրիկեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Բարթող էֆենտի Զօրեան
Բ. Վահան էֆենտի Թէքեան
Գ. Ռուբէն էֆենտի Զարդարեան

ԵԼԵԻՄՏԻՅ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Գ Ի Ն 1 Ղ Ր Ո Ւ Շ

Մեփակյանութիւն Ազգ. Սնուկին, Ազգ. Ժողովոյ ծախուց յաւկացեալ
Կը ծախուի յազգային Խորհրդարան Ղալաքիոյ